

Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր

_____ Ա. Է. Իսաբեկյան

28. 12. 2015 թ.

ԿԱՐԳ

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա օտարերկրյա քաղաքացիների ընդունելության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասերի, ՀՀ կառավարության 2011թվականի №700-Ն որոշման հավելված հանդիսացող «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ը և ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի №740-Ն հրամանով հաստատված «ՀՀ ասպիրանտուրայի ընդունելության կարգ»-ը:
2. Սույնով սահմանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (այսուհետ՝ ԵԳՊԱ) դիմող օտարերկրյա քաղաքացիների ընդունելության ընթացակարգը:
3. ԵԳՊԱ-ում օտարերկրյա քաղաքացիները կարող են կրթություն ստանալ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի (ասպիրանտուրա) կրթական ծրագրերով, ինչպես նաև սովորել նախապատրաստական դասընթացներում:

II. Օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կազմակերպումը

4. Օտարերկրյա քաղաքացիները, ԵԳՊԱ-ում սովորելու դիմում–հայտը և պահանջվող փաստաթղթերը ներկայացնում են ՀՀ ԿԳՆ:

5. ԵԳՊԱ-ի **նախապատրաստական** բաժին կարող են ընդունվել այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր դեռ սովորում են ՀՀ ավագ դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, կամ ունեն ՀՀ-ում կամ արտասահմանում ստացած առնվազն ավագ դպրոցի ատեստատին համապատասխանող ավարտական վկայականներ:
6. ԵԳՊԱ-ի **նախապատրաստական** բաժին ընդունվելու համար դիմորդը կարող է ընդունվել պայմանագրային սկզբունքով կամ ՀՀ ԿԳՆ ուղեգրով:
7. ՀՀ ԿԳՆ ուղեգրով **նախապատրաստական** բաժին ընդունված օտարերկրյա քաղաքացիները հրամանագրվում են որպես ԵԳՊԱ-ի ուսանողներ (տես՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի III կետի 21-րդ ենթակետը):
8. **Բակալավրի** որակավորման աստիճան ստանալու համար կարող են դիմել այն օտարերկրյա քաղաքացիները, որոնք ունեն ՀՀ-ում առնվազն միջնակարգ կրթությանը համապատասխանող կրթություն և ունեն այն հավաստող ավարտական փաստաթուղթ (ատեստատ, վկայական, դիպլոմ):
9. **Մագիստրոսի** որակավորման աստիճան ստանալու համար ԵԳՊԱ կարող են դիմել այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր ունեն ՀՀ առնվազն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) (տես՝ ՀՀ ԿԳ նախարարի 06.12.2007 թվականի № 1193-Ն հրամանը):
10. **Բակալավրի և մագիստրոսի** կրթական ծրագրով ուսանելու համար դիմած օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը իրականացվում է դիմորդների հարցազրույցների, և/կամ պորտֆոլիոների ուսումնասիրության հիման վրա: Մրցույթի առկայության դեպքում կազմակերպվում են քննություններ:
11. **Բակալավրի և մագիստրոսի** կրթական ծրագրերով երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմած օտարերկրյա քաղաքացիների ընդունելության ժամկետը, ուսանելու կուրսը և մյուս պայմանները սահմանում է դիմումները քննարկելու նպատակով ստեղծված ատեստավորման հանձնաժողովը (տես՝ ՀՀ ԿԳ նախարարի 15.08.2006 թ. № 671-Ն հրամանով հաստատված կարգը):
12. **Հետազոտողի** կրթական ծրագրով ԵԳՊԱ-ի ասպիրանտուրայում ուսանելու համար կարող են դիմել այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր ունեն ՀՀ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի կրթական աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
13. Հետազոտողի կրթական ծրագրով ուսանելու համար դիմած օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը իրականացվում է ԵԳՊԱ-ի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան

հաստատված կարգով՝ դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև դիմորդի կողմից ներկայացրած գիտական ռեֆերատի վերաբերյալ ԵԳՊԱ-ի գիտական հանձնաժողովի դրական կարծիքի հիման վրա:

14. Օտարերկրա քաղաքացիները կարող են դիմել ԵԳՊԱ նաև ընդհանուր հիմունքներով: Դիմում-հայտը ընդունվում է միայն այն դեպքում, եթե դիմորդը նախորդ կրթությունը ստացել է ՀՀ-ում կամ օտարերկրյա կրթության ավարտական փաստաթղթերի իսկությունը հավաստվում ՀՀ ԿԳՆ-ի կողմից, որը կատարվում է փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց, միասնական տեղեկատվական բանկի ստեղծումից հետո (տես՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի III կետի 17-րդ ենթակետը):
15. Օտարերկրյա քաղաքացիները ԵԳՊԱ-ում կարող են սովորել.
 - պայմանագրային հիմունքներով (վճարովի),
 - միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ պետության կողմից ուսանողական նպաստների ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում,
 - ՀՀ կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:
16. Սփյուռքահայերին պետության կողմից տրամադրվող ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխումն իրականացվում է ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից: Տեղերը տրամադրվում են տվյալ կրթական ծրագրի համար որպես նպատակային՝ միայն ԵԳՊԱ-ում և տվյալ մասնագիտության գծով ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:
17. Սույն ընթացակարգով դիմորդների համար վճարովի տեղերի քանակը չի սահմանափակված, եթե այլ բան նախատեված չէ ՀՀ օրենսդրությամբ:
18. Ընդունելության ժամկետները սահմանվում են ՀՀ ԿԳ նախարարի հրամանով:

III. Փաստաթղթերի ընդունումը

19. Դիմորդների փաստաթղթերի ընդունումը, հաշվառումը և փորձաքննությունը կատարվում է ՀՀ ԿԳՆ-ի կողմից:
20. Պահանջվող փաստաթղթերն են.

- Դիմում-հայտ,
- 3x4 չափի 6 լուսանկար
- Կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը՝ թարգմանված և հաստատված նոտարով,
- Անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները՝ թարգմանված և հաստատված նոտարով,
- Տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին,
- Ինքնակենսագրություն հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

IV. Ատեստավորման/գիտելիքների ստուգման կազմակերպումը

21. ՀՀ ԿԳՆ-ի համապատասխան գրությամբ դիմորդի փաստաթղթերը ստանալուց հետո միջազգային կապերի բաժնի պատասխանատուն հանդիպում է դիմորդների հետ, ներկայացնում դիտումների ընթացակարգը և հավաքագրում է դիմորդների պորտֆոլիոները:
22. Միջազգային կապերի բաժնի պատասխանատուն ֆակուլտետի դեկանին ներկայացնում է յուրաքանչյուր դիմորդի պորտֆոլիոն և զեկուցագիր համապատասխան օտարերկրյա դիմորդների գիտելիքների ստուգում/ատեստավորում կազմակերպելու վերաբերյալ:
23. Ֆակուլտետում ձևավորվում է ատեստավորման հանձնաժողով դեկանի նախագահությամբ, որում ընդգրկվում են ֆակուլտետի ամբիոնների վարիչները և դասախոսներ: Հանձնաժողովի կազմը համաձայնեցվում է ուսումնա-գիտական գծով պրոռեկտորի հետ:
24. Բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճան ստանալու համար օտարերկրյա դիմորդների ատեստավորումը կազմակերպվում է հետևյալ կարգով.
 - Հանձնաժողովը ուսումնասիրում է դիմորդի պորտֆոլիոն (աշխատանքները) և անց է կացնում հարցազրույց, որոնց հիման վրա, հանձնաժողովը որոշում է կայացնում դիմորդին ընդունելու կամ դիմումը մերժելու վերաբերյալ: Հանձնաժողովը դիմորդին կարող է առաջարկել ուսումը սկսել նախապատրաստական դասընթացներից: Հանձնաժողովի նիստը արձանագրվում է:
 - Մրցույթի առկայության դեպքում մշակվում է քննական օրացույց համաձայն որի կազմակերպվում են քննություններ: Քննական առաջադրանքները համապատասխանում են ԵԳՊԱ ընդհանուր հիմունքներով ընդունվող դիմորդների համար նախատեսված և ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված ծրագրերին:
 - Քննությունների արդյունքները ներկայացվում են ՀՀ ԿԳՆ:

- Ընդունելության մրցույթը իրականացվում է ՀՀ ԿԳՆ-ի կողմից:
 - ԵԳՊԱ-ի նախապատրաստական դասընթացները ավարտած օտարերկրյա քաղաքացիները ընդունվում են ոչ մրցույթային կարգով նախապատրաստական դասընթացների ընթացքում կատարված աշխատանքների դիտման հիման վրա:
25. Հետազոտողի կրթական ծրագրով ուսանելու համար օտարերկրացի դիմորդը պետք է ներկայացնի.
- ասպիրանտական թեմայի վերնագիրը և կառուցվածքը,
 - գիտական ռեֆերատ 20 էջի սահմաններում՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով,
 - օրացուցային աշխատանքային պլան,
 - համապատասխան վկայականներ «Ինֆորմատիկա» և «Օտար լեզու» առարկաներից:
26. ԵԳՊԱ-ում հետազոտողի կրթական ծրագրով ուսանելու համար դիմորդը հանձնում է մասնագիտական քննություն՝ «Ընդհանուր արվեստի պատմություն» առարկայից:
27. Դրական գնահատական ստանալու դեպքում դիմորդի գործերը քննարկվում են գիտական ժողովի կողմից:
28. Գիտական ժողովի նիստում քննարկվում է դիմորդի թեման և հաստատման դեպքում նշանակվում գիտական ղեկավար:
29. Գիտական ժողովի արձանագրությունը և քննության արդյունքները միջազգային կապերի բաժնի կողմից ներկայացվում է ՀՀ ԿԳՆ:

Դիմորդների հրամանագրումը

30. ՀՀ ԿԳ նախարարության համապատասխան գրության, հանձնաժողովի/գիտական խորհրդի որոշման և համապատասխան ֆակուլտետի ղեկանի զեկուցագրի հիման վրա դրական նիշեր ստացած դիմորդները հրամանագրվում են որպես ԵԳՊԱ-ի ուսանողներ:
31. ԵԳՊԱ-ի Միջազգային կապերի բաժնի աշխատակցի կողմից լրացվում է ուսանողի անձնական թերթիկը, ուսանողական գրքույքը, ուսանողական տոմսը և հանձնվում ուսանողների հաշվառման բաժին:
32. Հրամանագրված ուսանողների տվյալները գրանցվում են համապատասխան էլեկտրոնային բազայում: